

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«15» նոյեմբեր 2019թ.

No 3404 - Ա

**ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՆՐԵԱԶԵՐԾ ՍԵՂԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետերով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) «Վիրաբուժական միջամտությունների ժամանակ մանրէազերծ սեղանի բացման գործունեության ընթացակարգը»՝ համաձայն հավելված 1-ի,
- 2) «Վիրաբուժական միջամտությունների ժամանակ մանրէազերծ սեղանի բացման գործունեության ալգորիթմը»՝ համաձայն հավելված 2-ի:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Առողջապահության նախարարի
201_ թվականի _____-ի թիվ _____-Ա հրամանի

Փաստաթղթի տեսակը	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
Փաստաթղթի անվանումը	Վիրաբուժական միջամտությունների ժամանակ մանրէազերծ սեղանի բացման
Կողը	

Պատրաստված է	Պաշտոնը	Ամսաթիվ (dd.mm.yy)	ստորագրություն
Ստուգված է	Պաշտոնը	Ամսաթիվ (dd.mm.yy)	ստորագրություն
Հաստատված է	Պաշտոնը	Ամսաթիվ (dd.mm.yy)	ստորագրություն

1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Նպատակ՝

1) Սույն գործունեության ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) նպատակն է բուժաշխատողների կողմից իրականացնել վիրաբուժական միջամտությունների ժամանակ մանրէազերծ սեղանի բացման գործընթացը: Այս ընթացակարգը հնարավորություն կտա հոսպիտալային համաճարակաբաններին/վարակի հսկողության պատասխանատուներին բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելումը:

2. Կարգավորման ոլորտը՝

1) Սույն ընթացակարգը կարգավորում է վիրաբուժական միջամտությունների ժամանակ մանրէազերծ սեղանի բացման գործընթացը:

3. Կիրառման ոլորտ՝

1) Սույն ընթացակարգը նախատեսված է այն բուժաշխատողների համար, ովքեր իրականացնում են մանրէազերծ սեղանի պատրաստում:

2) Մանրէազերծ սեղանի պատրաստման գործընթացը իրականացվում է սույն ընթացակարգի վերաբերյալ դասընթաց անցած բուժաշխատողների կողմից:

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ (ԿԱՏԱՐՈՂ) ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ (ՎԵՐԱՀՍԿՈՂ) ԱՆՁԻՆՔ

4. Անձնակազմի պարտականություններ

N	Առաջադրանք	Պատասխանատու (կատարող) անձ	Հաշվետու (վերահսկող) անձ
1	Մանրէազերծ սեղանի պատրաստում	Բուժքույր	Բուժող բժիշկ, համաճարակաբան

5. Պարտական

ություններ և պահանջներ՝ կապված անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության հետ.

1) Մանրէազերծման սեղանի պատրաստման գործընթացի մեջ ներգրավված ողջ անձնակազմը պարտավոր է պահպանել ստանդարտ նախազգուշական միջոցառումներ (անհատական անվտանգության կանոններ)՝ կիրառելով անհատական պաշտպանության միջոցներ (խալաթ, ձեռնոցներ, դիմակ):

2) Ձեռնոցների կիրառման ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 2718-Ա հրամանի «Ձեռնոցները որպես բժշկական միջամտությունների անվտանգության ապահովման միջոց» մեթոդական ուղեցույցի պահանջներով:

3) Բժշկական թափոնների անվտանգ գործածության, ինչպես նաև անկանխատեսելի դեպքերի, արտակարգ իրավիճակների ժամանակ (պատահական ծակոցներ, թափոնների արտահոսք և այլն) հակահամաճարակային միջոցառումները իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի «Բժշկական թափոնների գործածությանը

ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 ՍանԿնՆ պահանջների:

4) Ձեռքերի հիգիենան իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 2700-Ա հրամանով հաստատված «Ժամանակակից մոտեցումներ ձեռքերի հիգիենայի վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի պահանջների համաձայն:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

6. Բուժանձնակազմի նախապատրաստում՝

- 1) Բուժանձնակազմի ձեռքերի մշակում՝ ալկոհոլի հիմքի վրա հակասեպտիկ նյութով,
- 2) Ձեռնոցների կիրառում (մանրէազերծ և ոչ մանրէազերծ):

7. Մանրէազերծ սեղանի բացման նախապատրաստում՝

- 1) Մանրէազերծ սեղանի պատրաստման գործընթացը՝ մանրէազերծ սեղանի եռաշերտ ծածկումն է մանրէազերծ սավանով: Վիրաբուժական միջամտությանը նախապատրաստվելու համար անհրաժեշտ է բացել մանրէազերծ սեղանը՝ պահպանելով բժշկական գործիքների և բժշկական նշանակության իրերի մանրէազերծման գործընթացը:

8. Անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ՝

- 1) Անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ),
- 2) Վիրահատական մեծ սեղան, գործիքների համար նախատեսված սեղան, աշխատանքային սեղան,
- 3) Մանրէազերծ սպիտակեղեն (սավան) և պացիենտի սպիտակեղենի հավաքածու,
- 4) Մանրէազերծ խալաթ, մանրէազերծ և ոչ մանրէազերծ ձեռնոցներ,
- 5) Վիրաբուժական գործիքներ և բժշկական նշանակության պարագաներ:

9. Աշխատանքային ընթացակարգ՝

- 1) Ստուգել մանրէազերծ սպիտակեղենային հավաքածուի հերմետիկությունը,
- 2) Ստուգել մանրէազերծման ամսաթիվը,
- 3) Ստուգել հավաքածուի անվանումը,

- 4) Ստուգել գործիքների փաթեթավորման և թմբուկի վրա զգայորոշիչ թեստերի (ինդիկատորների) առկայությունը և արդյունքը,
- 5) Հազնել խալաթ, դիմակ, բժշկական գլխարկ,
- 6) Ձեռքերը մշակել ալկոհոլի հիմքի վրա հակասեպտիկ նյութով,
- 7) Թմբուկից հանել մանրէազերծված վիրաբուժական խալաթը, ձեռնոցները՝ պահպանելով ասեպտիկայի բոլոր կանոնները,
- 8) Սավանը փռել մեծ սեղանին,
- 9) Սավանների միջոցով պատրաստել վիրահատական սեղանը՝
 - ա. առաջին մանրէազերծ սավանը այնպես փռել սեղանին, որ ծածկի բոլոր եզրերը և ներքևից 30 սմ կախվի,
 - բ. երկրորդ սավանը առաջինին ուղղահայաց փռել այնպես, որ ներքևից կախվի 20 սմ,
 - գ. երրորդ սավանով ծածկել սեղանը նույն հերթականությամբ, այնպես որ ներքևից կախվի 10 սմ,
- 10) Դասավորել վիրաբուժական գործիքներն ու վիրակապական նյութերը,
- 11) Աշխատանքային սեղանը ծածկել պաշտպանիչ մանրէազերծ սավանով,
- 12) Պահեստային գործիքները թողնել ցանցի մեջ՝ նույն սեղանի վրա և ծածկել սավանով,
- 13) Միջամտության վերջում բոլոր գործիքները, այդ թվում նաև չօգտագործվածները, ուղարկել կենտրոնական մանրէազերծման բաժանմունք:

Հավելված 2

Առողջապահության նախարարի

201_ թվականի _____-ի թիվ _____-Ա հրամանի

ՍԱՐԷԱԶԵՐՕՍԵՂՍԻ ԲԱՅՍՆ ԳՈՐԾԻՆԵՌՔՍՆ ԱԼ ԳՈՐԾԻ

ԱՏՈՒԳԵԼ			
1. Ամբուլատոր սպիտակեղենային հալսքսնու ի հերմեսիկու թյ ու նը	2. Ամբուլատորման անսաթիվը	3. Հալսքսնու ի սովանու մը և սերիան	4. Գործիքների վաթեթալորման և թմբու կի վրազգայ որոշիչ թեստերի (ինդիկատորների) սակայ ու թյ ու նը և սրոյ ու նքը
ՎԱՐՈՒՄԱՐՈՒՄ			
1. Հազնել իսկ սթ, դիմակ, բժշկական գլ իսրկ	2. Ձեռքերը մշակել պ կոհուլ ի հիմքի վրա հակաանսաթիկ նյ ու թուլ	3. Հանել մանրէազերծված վիրաբու ժական իսկ սթը, ձեռնոցները պահպանել ով անսաթիկայ ի բոլ որ կանոնները	4. Օգնականն օգնու մ է հազնել մանրէազերծված վիրաբու ժական իսկ սթն ու ձեռնոցները
ՄԵՂԱԻ ՎԱՐՈՒՄԱՐՈՒՄ			
1. Սալանը փռել մեծ սեղանին	2. Մեսքին մանրէազերծ սալանը պ նսխա փռել սեղանին, որ ծածկի բոլ որ եզրերը ներքևից 30 սմ կախի	3. Երկրորդ սալանը առաջինին ուղղահայ սց փռել պ նսխա, որ ներքև ից կախի 20 սմ	4. Երրորդ սալանով ծածկել սեղանը նույն և հերթականու թյ ամբ, պ նսխա որ ներքևից կախի 10 սմ
5. Մշխատանքային սեղանը կիսածածկել պաշտպանիչ սալանով	6. Պասալորել վիրաբու ժական գործիքներն ու վիրակապական նյ ու թերը	7. Պահեստային գործիքները թողնել ցանցի մեջ՝ մաքուր սեղանի վրա	8. Մշխատանքային սեղանը՝ ներառյ պ գործիքներով ցանցը, ծածկել պաշտպանիչ սալանով
ՄԵՂԱԻ ՀԱՎԱՐՈՒՄ			
Բոլ որ օգտագործված և չօգտագործված գործիքները ուղարկել կենտրոնական մանրէազերծման բաժանմունք			
ՀԻՇԵՔ			
ՄԵՂԱԼ ՀԱՍՏԱՎՈՐՄԷ ՍԱՐԷԱԶԵՐՕՍԻՄՆ 6 ՃԱՊԱԼԱԹԱՅՐՈՒՄ (կամ մինչև և 1-ին վիրահատու թյ ան ակարսը)			

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը,

ախտահանմանը, նախամանրէագերծման մշակմանը և մանրէագերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին թիվ 48-Ն հրաման:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի «Ձեռնոցները որպես բժշկական միջամտությունների անվտանգության ապահովման միջոց» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին թիվ 2718-Ա հրաման:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի դեկտեմբեր 6-ի «Սրածայր գործիքներով վնասվելու և արյան հետ պատահական շփման դեպքում բուժաշխատողների մասնագիտական վարակվածության կանխարգելման» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին թիվ 2837-Ա հրաման:
4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Ժամանակակից մոտեցումներ ձեռքերի հիգիենայի վերաբերյալ» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին թիվ 2700-Ա հրաման:
5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 ՍանԿԼՆ: